

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

200-200-200-200-200

Նախապատրաստական Ծխական ժողովս տեղի ունեցաւ Կիրակի 17 Դեկտեմբեր 1967ին,
Կ.Շ.Ժամը 3-ին ՀԱՅ ՏՈՒՆԻ Մէջ, Օրակարգ ունենալով,

1-7 Սեպտեմբեր 1967 բացառիկ ընդհանուր անդամական ժողովին առենագըրութեան ընթերցում եւ վաւերացում :

2- Ընտրողական Յանձնախումբի ընտրութիւն :

3- ՆԵՐԿԱՅ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈւՌԴԻ ՁԵՐԱԴՐԱՆՑՆԵՐԻ :

4- Խորհրդատու Մարմին :

1-7 Սեպտեմբերի 1767 բացառիկ ընդհանուր անդամական ժողովին առենագրութիւնը կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ:

3- Ընտրողական թանձնախումբի անդամներու թիւին համար /3 կամ 5 հոգի/ եղած առաջարկը գոց քուէարկութեամբ տուաւ հետեւեալ արդիւնքը,

24. *Ruth* 3. *Sophia*

10. ՔՈՒԵ 5. ԾՈԳԻ

Երեք անձերէ բաղկացած ընտրողական յանձնախումբ մը կազմելու որոշումը առնուելէ յետոյ, առաջարկուած 6 անուններէ գոց քուէարկութեամբ ընտրուեցան,

ՊՐԻՖԻՐԱԾՈՐ ՔՈՒԽԹԵՐԵԱՆ 30 գուշէ

ՊՐԵՐԱԿԱՆԴ ՇԻՇՄԱՆԵԱՆ · 30 ՊՈՒԷ

ՊՐ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԵԶՋԵՐԵԱՆ 18 քուէ

3- Ծխական Խորհուրդս կը թելադրէ,

Ա-Ծխական Խորհուրդի անդամներուն թիւը բարձրացնել 9ի /փոխանակ ներկայի. 7 հօգիին/: Ժողովը յարմար դատելով Խորհուրդիս առաջարկելը, որունց 9ի բարձրացնել յաջորդ Ծխական Խորհուրդի անդամներուն թիւը :

Նկատի ունենալով որ ներկայ Ծխական Խորհուրդն պաշտօնէ կը դադրին 6 անդամներ եւ կը մնայ Միայն մէկ անդամ, որոշուեցաւ Ընտրողական թանձնախումբի կողմէ պատրաստել 16 հոգիներէ բաղկացած, երկպատիկ ցանկ մը, ընտրելու համար 8 անձեր, որոնցին առաւելագոյն քուէ ստացող 5 անձերը պաշտօնավարեն 2 տարուայ իսկ 3ը տարուայ մը համար :

Բ- Ծխական Խորհուրդս կ, առաջարկէ նաեւ թէ կազմուելիք Եկեղեցաշինու թեան Յանձնախումբին մաս կազմեն նոյնպէս Ծխական Խորհուրդի 2 անդամները: Ժողովս կը վաւերացնէ այս առաջարկը Եւ կ, որոշէ Եկեղեցաշինութեան Յանձնախումբի անդամներուն Շիւր 7 հոգի: Զեռնբարձքու էարկութեամբ,

РБР 23 пнк

ԴէՄ 5 դուք

ԶԵՐԱՆԱՀ 8 ԳՈՒՅ

Ժողովս կ, որոշէ նաեւ Եկեղեցաշինութեան Յանձնախումբի կողմէ

ընտրութեան ցանկը պատրաստել Ընտրողական Յանձնախումբի կողմէ :

4- Նորհրդատու Մարմնի կազմութեան նկատմամբ ժողովիս կողմէ խնդրուած լուսաբանութեան, Ծխական նորհուրդս բացատրութիւններ կուտայ,

, Ծխական նորհուրդս յարմար դատելով Եկեղեցաշինութեան Յանձնախումբի մը վերակազմութիւնը, Հրաւիրած է քանի մը ազգայիններ :

Ծխական նորհուրդս, Եկեղեցաշինութեան Հարցին շուրջ հանդիպում մը ունենալու նպատակաւ Հրաւիրած ազգայիններուն մեծամասնութիւնը, այդ ժամանակ արդէն իսկ հաւաքուած եւ համայնքիս տարակարծ անձերը իրարու մօտեցնելու նպատակաւ ժողովներ կը գումարէին, Հրաւիրելով գաղութիս պաշտօնական մարմիններու վարչութեանց մի քանի ներկայացուցիչները :

Հրաւիրեցին նաեւ 18 Սեպտեմբերին, 1967, Ծխական նորհուրդս :

Այս ժողովին ներկայ ազգայիններ Ծխական նորհուրդիս գաղափարին համակարծիք, յայտարարած են թէ Ծխական նորհուրդը զիրենք Հրաւիրելու պարագային պատրաստեն աշխատելու Ծխականի կողքին եւ հովանաւորութեամբ, Եկեղեցաշինութեան գործին մէջ :

Նկատի ունենալով որ յիշեալ մարմնի անդամներուն մեծամասնութիւնը մաս կը կազմէին այն անձերու ցանկին զոր նորհուրդս Հրաւիրած էր խորհրդակցական ժողովի մը Եկեղեցաշինութեան Հարցին շուրջ եւ ուզելով քաջալերել այդ անդամներու սրտարուս գործունեութեան ոգին, որոշեց հանդիպում մը ունենալ իրենց հետ 25 Սեպտեմբեր 1967 թուականին : Վերոյիշեալ անձերը կը խնդրէին նաեւ թէ Ծխական նորհուրդը հաճէր հաստատել իրենց կազմը ԾԽԱԿԱՆ նորհուրդի նորհուրդատու ՄԱՐՄԻՆ անունին տակ փոխանակ Եկեղեցաշինութեան Յանձնախումբի :

Ահա այսպէս եղաւ Ծխական նորհուրդիս ծրագրած Եկեղեցաշինութեան Յանձնախումբի մը վերակազմութիւնը, նորհուրդատու Մարմին անունին տակ :

Այս բացառիկ ընդհանուր անդամական ժողովս իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ Առաջնորդ Սրբազան ՀՕՐ, որ բարի եւ շինիչ գաղափարն ունեցած է հաստատելու Առաջնորդական Փոխանորդութիւն մը Գանատայի մէջ յանձին գեր2, Տ. Վաշէ Եպիս . Թովսէինի :

Բարի գալուստ եւ յաջողութիւններ կը մաղթենք Առաջնորդական Փոխանորդ Սրբազան ՀՕՐ :

Ժողովը վերջ գտաւ ժամը 7,30ին :

ԾԽԱԿԱՆ նորհուրդ

Ա. ՄԱՐՏԻԿԵԱՆ

Յ. ՔԷՍԹՔՅԱՆ

Ատենադպիր

Ատենապետ